ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**№ 2759-Ա/2** **«04» դեկտեմբեր 2025 թ.**

## 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել 2026 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա» մարզական միջոցառման՝
   1) կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,
   2) մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված № 2-ի:

**ՆԱԽԱՐԱՐ՝** **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

X

*Հավելված № 1*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*

*2025 թվականի --------------------------- -------- -ի*

*№ --------------- -Ա/2 հրամանի*

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

## 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

## I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2026 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա» մարզական միջոցառման (այսուհետ՝ Սպարտակիադա) նպատակներն են՝

1) ուսումնական հաստատությունների մինչև 18 տարեկան սովորողների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը,

2) ֆիզիկապես կոփված երիտասարդներ դաստիարակելը:

2. Սպարտակիադայի խնդիրներն են՝

1) աշակերտների շրջանում ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարելավումը, նրանց աշխատունակության բարձրացումը, առողջության ամրապնդումը,

2) առողջ կենսակերպի արմատավորումը և մարզական-մասսայական միջոցառումներում բարձր դասարանների աշակերտների ներգրավումը:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Սպարտակիադայի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Սպարտակիադան անցկացվում է հրաձգություն, բազկամարտ, շախմատ հնգամարտ և ֆուտզալ մարզաձևերից:

5. Սպարտակիադայի անցկացմանն աջակցում են Հայաստանի մարզական ֆեդերացիաները, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը, մարզերի համայնքները, Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանները:

6. Սպարտակիադան անցկացվում է 4 փուլով՝

1) 1-ին փուլը՝ ուսումնական հաստատություններում,

2) 2-րդ փուլը՝ համայնքներում և Երևանի վարչական շրջաններում,

3) 3-րդ փուլը՝ մարզերում և Երևան քաղաքում,

4) 4-րդ՝ եզրափակիչ փուլը՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում:

7. Կազմակերպման ու անցկացման պատասխանատվությունն, ըստ փուլերի, կրում են՝

1) 1-ին փուլում՝ ուսումնական հաստատությունները,

2) 2-րդ փուլում՝ Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքները և Երևանի վարչական շրջանները,

3) 3-րդ փուլում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը:

4) 4-րդ՝ եզրափակիչ փուլում՝ Նախարարությունը և կանոնակարգով նախատեսված մարզաձևերի ֆեդերացիաների կողմից ներկայացված մրցավարական հանձնաժողովները:

## III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

8. 1-ին փուլն անցկացվում է մինչև սեպտեմբերի 20-ը ուսումնական հաստատություններում,

9. 2-րդ՝ Երևանի վարչական շիջանների և համայնքային փուլն անցկացվում է սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 5-ը Երևանի վարչկան շրջաններում և մարզերի համայնքներում,

10. 3-րդ՝ Երևան քաղաքի և մարզային փուլն անցկացվում է հոկտեմբերի 7-20-ը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում:

11. 4-րդ՝ եզրափակիչ փուլն անցկացվում է հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 30-ը՝ Երևան քաղաքում և մարզերում:

## IV. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

12. Սպարտակիադային կարող են մասնակցել ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարաններում սովորող աշակերտները, մասնագիտական կրթության և ուսուցման, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջներ) սովորողները (մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ծնված):

13. Սպարտակիադային չեն կարող մասնակցել «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ», «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի քոլեջի սովորողները:

14. Հնգամարտ և շախմատ մարզաձևերին կարող են մասնակցել 7-9-րդ դասարանների սովորողները (2012-2014 թվականներին ծնված):

15. Բազկամարտ և հրաձգություն մարզաձևերի մրցումներին կարող են մասնակցել կանոնակարգով նախատեսված ուսումնական հաստատությունների 7-12-րդ դասարանների սովորողները (2009-2014 թվականներին ծնված):

16. Ֆուտզալ մարզաձևի մրցումներին կարող են մասնակցել ուսումնական հաստատությունների 10-12-րդ դասարանների սովորողները (2009-2011 թվականներին ծնված):

17. Կանոնակարգի որևէ պահանջի խախտմամբ կազմված թիմը կորակազրկվի մրցումների ցանկացած փուլում:

18. Ըստ փուլերի մասնակցությունը՝

1) 1-ին փուլին մասնակցում են ուսումնական հաստատությունների սովորողները (մասնակիցների կազմը ձևավորելու համար): Հնգամարտ, շախմատ, հրաձգություն, բազկամարտ և ֆուտզալ մարզաձևերից ձևավորվում է ուսումնական հաստատության թիմը, որը մասնակցում է հաջորդ փուլերին,

2) 2-րդ՝ համայնքային և Երևանի վարչական շրջանների փուլին մասնակցում են ուսումնական հաստատություններից ընտրված թիմերը՝ ըստ մարզաձևերի,

3) 3-րդ՝ Երևանի քաղաքային փուլին մասնակցում են 2-րդ փուլում 1-ին տեղեր գրաված թիմերը, իսկ մարզային փուլին մասնակցում են 2-րդ փուլում 1-3-րդ տեղերը գրաված թիմերը, բացառությամբ ֆուտզալ մարզաձևի, որի մարզային փուլին մասնակցում են միայն համայնքային փուլում 1-ին տեղեր գրաված թիմերը:

4) 4-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակցում են մարզային և Երևանի քաղաքային փուլերում 1-ին տեղեր գրաված թիմերը:

## V. ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

19. Սպարտակիադայի ծրագրում ներառված մարզաձևերի թիմերը կազմվում են՝

*1) **Հնգամարտ*** - Կրոսավազք (1000 մ. տղաներ, 500 մ. աղջիկներ), վազք (100 մ. տղաներ, վազք 60 մ. աղջիկներ), հեռացատկ տեղից, թենիսի գնդակի նետում հեռավորության վրա, լցոնած գնդակի նետում հեռավորություն՝ երկու ոտքերի արանքից (տղաներ-5 կգ, աղջիկներ-3 կգ): Մրցումների անցկացման պայմանները որոշում է մրցավարական հանձնաժողովը (յուրաքանչյուր թիմից մասնակցում է 3 տղա, 3 աղջիկ, 1 ներկայացուցիչ):

*2) **Հրաձգություն*** - Հրաձգության մրցումներն անցկացվում են օդամղիչ հրացանով 10 մետրից, 8 կրակոցներով, որից 5 հաշվարկային՝ հիմք ընդունելով հրաձգության միջազգային ֆեդերացիայի կանոնակարգը (յուրաքանչյուր թիմից մասնակցում է 4 տղա, 4 աղջիկ, 1 ներկայացուցիչ):

*3) **Շախմատ** (արագ)* - Մրցումներն անցկացվում են շրջանային մրցակարգով: Յուրաքանչյուր խաղի տևողությունը՝ 10-ական րոպե, 5 վարկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից (յուրաքանչյուր թիմից մասնակցում է 3 տղա, 3 աղջիկ, 1 ներկայացուցիչ):

*4) **Բազկամարտ** (տղա, աղջիկ)* – Մրցումներն անցկացվում են բազկամարտի գործող կանոնների համաձայն՝ աջ ձեռքով, տղաները վեց քաշային կարգերով՝ մինչև 55 կգ, 60 կգ, 65 կգ, 70 կգ, 75 կգ և +75, իսկ աղջիկները չորս քաշային կարգերով՝ մինչև 45 կգ, 55 կգ, 65 կգ և +65 (յուրաքանչյուր թիմից մասնակցում է 6 տղա, 4 աղջիկ, 1 ներկայացուցիչ):

*5)* ***ֆուտզալ*** – Մրցումների անցկացման պայմանները որոշում է մրցավարական հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ֆուտզալի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգը, խաղի տևողությունը՝ 20-ական րոպե, 5 րոպե ընդմիջումով (յուրաքանչյուր թիմից մասնակցում է 9 տղա, 1 ներկայացուցիչ):

20. Եզրափակիչ փուլում ընդհանուր թիմային հաշվարկը կատարվում է ըստ մարզաձևերի 1-ից 11-րդ տեղերը գրաված թիմերի ստացած միավորների առավելագույն գումարով (Աղյուսակ № 1):

21. Շախմատ, հրաձգություն և բազկամարտ մարզաձևերում միավորային հաշվարկը կատարվում է թիմի բոլոր անդամների արդյունքների ընդհանուր գումարով՝ համաձայն Աղյուսակ № 2-ի:

22. Հնգամարտ մարզաձևում միավորային հաշվարկն իրականցվում է համաձայն Աղյուսակ № 3-ի:

23. Ընդհանուր թիմային և անհատական հաշվարկում մի քանի թիմերի և մասնակիցների միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է առանձին մարզաձևերում առավել քանակի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին և անհատներին:

*Աղյուսակ* ***№ 1*** *– Ընդհանուր թիմային հաշվարկ*

| Գրաված տեղը | Միավորը |
|---|---|
| I | 100 |
| II | 80 |
| III | 60 |
| IV | 55 |
| V | 50 |
| VI | 45 |
| VII | 40 |
| VIII | 35 |
| IX | 30 |
| X | 20 |
| XI | 10 |

*Աղյուսակ* ***№ 2 -*** *Միավորային հաշվարկի սանդղակ՝ շախմատ, հրաձգություն, բազկամարտ մարզաձևերում*

| Գրաված տեղը | Միավորը |
|---|---|
| I | 50 |
| II | 45 |
| III | 40 |
| IV | 36 |

| | |
|---|---|
| V | 32 |
| VI | 29 |
| VII | 26 |
| VIII | 23 |
| IX | 20 |
| X | 15 |
| XI և բարձր տեղեր գրաված բոլոր մասնակիցներին՝ | 5 |

*Աղյուսակ* ***№ 3*** *- Միավորային հաշվարկի սանդղակ (հնգամարտ մարզաձևերում)*

Կրոսավազք (1000 մ տղաներ, 500 մ աղջիկներ), վազք (100 մ տղաներ, վազք 60 մ աղջիկներ), հեռացատկ տեղից, գնդակի նետում հեռավորության վրա, լցոնած գնդակի նետում (տղաներ-աղջիկներ):

| Միավորը (անհապական) | ՎԱՐԺԱՁԵՎԵՐԸ | | | | | | | | Միավորը (անհապական) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Վազք-1000 մ | Վազք-500 մ | Վազք-100 մ | Վազք-60 մ | Թենիսի գնդակի նետում հեռավոր. վրա | Լցոնած գնդակի նետում | | Հեռացատկ տեղից | |
| | Տղա | Աղջիկ | Տղա | Աղջիկ | | Տղա (5-կգ) | Աղջիկ (3-կգ) | | |
| | Արդյունքը | Արդյունքը | Արդյունքը | Արդյունքը | Արդյունքը (մետր) | Արդյունքը (մետր) | Արդյունքը (մետր) | Արդյունքը (մետր) | |
| **100** | 3.00.0 | 1.24.0 | 11.8 | 7.0 | 60 | 18.0 | 17.0 | 2.60 | **100** |
| **90** | 3.01.0 | 1.24.5 | 11.9 | - | 59 | 17.0 | - | 2.55 | **90** |
| **80** | 3.02.0 | 1.25.0 | 12.0 | 7.2 | 58 | 16.0 | 16.0 | 2.50 | **80** |
| **75** | 3.03.0 | 1.25.2 | 12.05 | - | 57 | 15.0 | 15.0 | 2.45 | **75** |
| **70** | 3.04.0 | 1.25.4 | 12.1 | 7.4 | 56 | 14.0 | 14.0 | 2.43 | **70** |
| **65** | 3.05.0 | 1.25.6 | 12.2 | - | 55 | 13.5 | 13.5 | 2.40 | **65** |
| **60** | 3.06.0 | 1.25.8 | 12.3 | 7.6 | 54 | 13.0 | 13.0 | 2.36 | **60** |
| **55** | 3.07.0 | 1.26.0 | 12.4 | - | 53 | 12.5 | 12.5 | 2.32 | **55** |
| **50** | 3.08.0 | 1.26.2 | 12.5 | 7.8 | 52 | 12.0 | 12.0 | 2.28 | **50** |
| **45** | 3.09.0 | 1.26.5 | 12.6 | - | 51 | 11.5 | 11.5 | 2.26 | **45** |
| **44** | 3.10.0 | 1.26.8 | 12.7 | 8.0 | 50 | 11.0 | 11.0 | 2.25 | **44** |
| **43** | 3.11.0 | 1.27.4 | 12.8 | 8.1 | 49 | 10.5 | 10.5 | 2.24 | **43** |
| **42** | 3.12.0 | 1.28.0 | 12.9 | 8.2 | 48 | 10.0 | 10.0 | 2.23 | **42** |
| **41** | 3.13.0 | 1.28.6 | 13.0 | 8.3 | 47 | 9.5 | 9.5 | 2.22 | **41** |
| **40** | 3.14.0 | 1.29.2 | - | 8.4 | 46 | 9.0 | 9.0 | 2.20 | **40** |
| **39** | 3.15.0 | 1.30.4 | 13.01 | 8.5 | 45 | 8.5 | 8.5 | 2.17 | **39** |
| **38** | 3.16.0 | 1.31.0 | - | 8.6 | 44 | 8.0 | 8.0 | 2.14 | **38** |
| **37** | 3.17.0 | 1.32.0 | 13.02 | 8.7 | 43 | 7.5 | 7.6 | 2.12 | **37** |
| **36** | 3.18.0 | 1.33.0 | - | 8.8 | 42 | 7.0 | 7.2 | 2.08 | **36** |
| **35** | 3.19.0 | 1.34.0 | 13.03 | 8.9 | 41 | 6.5 | 6.8 | 2.00 | **35** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **34** | 3.20.0 | 1.35.0 | - | 9.0 | 40 | - | 6.4 | 1.95 | **34** |
| **33** | 3.21.0 | 1.36.0 | 13.04 | 9.1 | 39 | 6.0 | - | 1.90 | **33** |
| **32** | 3.22.0 | 1.37.0 | - | - | 38 | - | 6.0 | 1.85 | **32** |
| **31** | 3.23.0 | 1.38.0 | 13.05 | 9.2 | 37 | 5.6 | - | 1.80 | **31** |
| **30** | 3.24.0 | 1.39.0 | - | - | 36 | - | 5.6 | 1.75 | **30** |
| **29** | 3.25.0 | 1.40.0 | 13.06 | 9.3 | 35 | 5.2 | - | 1.70 | **29** |
| **28** | 3.27.0 | 1.41.0 | - | - | 34 | - | 5.3 | 1.65 | **28** |
| **27** | 3.29.0 | 1.42.0 | 13.07 | 9.4 | 33 | 4.9 | - | 1.60 | **27** |
| **26** | 3.31.0 | 1.43.0 | - | - | 32 | - | 5.0 | 1.55 | **26** |
| **25** | 3.33.0 | 1.44.0 | 13.08 | 9.5 | 31 | 4.6 | - | 1.50 | **25** |
| **24** | 3.35.0 | 1.45.0 | - | - | 30 | - | 4.6 | 1.45 | **24** |
| **23** | 3.37.0 | 1.46.0 | 13.9 | 9.6 | 29 | 4.3 | - | 1.40 | **23** |
| **22** | 3.46.0 | 1.47.0 | - | - | 28 | - | - | 1.35 | **22** |
| **21** | 3.48.0 | 1.48.0 | 14.0 | 9.7 | 27 | 4.0 | 4.3 | 1.30 | **21** |
| **20** | 3.50.0 | 1.50.0 | - | - | 26 | - | - | 1.25 | **20** |
| **19** | 3.52.0 | 1.52.0 | 14.1 | 9.8 | 25 | 3.7 | - | 1.20 | **19** |
| **18** | 3.54.0 | 1.54.0 | - | - | 23 | - | 4.0 | 1.15 | **18** |
| **17** | 3.56.0 | 1.56.0 | 14.2 | 9.9 | 22 | 3.5 | - | - | **17** |
| **16** | 3.58.0 | 1.57.0 | - | - | 21 | - | - | 1.10 | **16** |
| **15** | 4.00.0 | 1.58.0 | 14.3 | 10.0 | 20 | 3.0 | 3.7 | - | **15** |
| **14** | 4.06.0 | 1.59.0 | - | - | 19 | - | - | 1.05 | **14** |
| **13** | 4.10.0 | 2.00.0 | 14.4 | 10.1 | 17 | - | 3.5 | - | **13** |
| **12** | 4.15.0 | 2.05.0 | - | - | 16 | - | - | 1.00 | **12** |
| **11** | 4.20.0 | 2.10.0 | 14.5 | 10.2 | 15 | 2.5 | - | - | **11** |
| **10** | 4.25.0 | 2.15.0 | 14.6 | - | - | - | 3.0 | 0.95 | **10** |
| **9** | 4.30.0 | 2.20.0 | 14.7 | 10.3 | 14 | - | - | - | **9** |
| **8** | 4.35.0 | 2.21.0 | 14.8 | 10.4 | - | - | - | 0.90 | **8** |
| **7** | 4.40.0 | - | 14.9 | 10.5 | 13 | 2.0 | 2.5 | - | **7** |
| **6** | 4.45.0 | 2.22.0 | 15.0 | 10.6 | - | - | - | 0.85 | **6** |
| **5** | - | - | 15.2 | 10.7 | 12 | - | - | - | **5** |
| **4** | 4.50.0 | 2.23.0 | 15.4 | 10.8 | - | 1.5 | 2.0 | 0.80 | **4** |
| **3** | - | - | 15.6 | 10.7 | 11 | - | - | - | **3** |
| **2** | 4.60.0 | 2.24.0 | 16.0 | 11.0 | - | - | 1.5 | - | **2** |
| **1** | Եզրագիծը հատած մարզիկը և մարզուհին ստանում է նվազագույնը 1 միավոր | | Միջև՝ 16.1 | Միջև՝ 11.1 | 10 | - | - | 0.75 | **1** |

## VI. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

24. 1-ին՝ ներդպրոցական փուլում լավագույն արդյունք ցուցաբերած սովորողները պարգևատրվում են ուսումնական հաստատության կողմից:

25. 2-րդ՝ համայնքային և Երևանի վարչական շրջանների փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին տրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրեր:

26. 3-րդ՝ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևանի քաղաքային փուլերի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին տրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրեր և գավաթներ:

27. 4-րդ փուլում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված դպրոցների թիմերը, ըստ մարզաձևերի, պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, հուշանվերներով, մեդալներով և դրամական պարգևներով՝ դպրոցի մարզական ենթակառուցվածքների բարելավման կամ մարզական գույք ձեռք բերելու նպատակով.

1-ին տեղ գրաված դպրոցը պարգևատրվում է՝ 450,000 ՀՀ դրամով,

2-րդ տեղը՝ 350,000 ՀՀ դրամով,

3-րդ տեղը՝ 250,000 ՀՀ դրամով:

Հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն:

28. Ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզերը պարգևատրվում են գավաթներով, Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, 4-ից 11-րդ տեղեր գրաված մարզերին հատկացվում է շնորհակալագիր և մարզագույք:

## VII. ԾԱԽՍԵՐԸ

29. Միջոցառման 2-րդ և 3-րդ փուլերի Երևան քաղաքի մրցավարների (սննդի ընդունման օրական վճարի չափ) ծախսերը կատարում են Երևանի քաղաքապետարանը և Երևանի վարչական շրջանների աշխատակազմերը, մասնակից դպրոցների գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները, իսկ մրցանակային տեղեր գրաված դպրոցներին 2-րդ փուլում տրվող հավաստագրերը և 3-րդ փուլում տրվող հավաստագրերը և գավաթները տրամադրում է Նախարարությունը:

30. Միջոցառման 2-րդ փուլում մրցավարների (սննդի ընդունման օրական վճարի չափ) ծախսերը կատարում են Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքապետարանները, իսկ ըստ մարզաձևերի մրցանակային տեղեր գրաված դպրոցներին տրվող հավաստագրերը տրամադրում է Նախարարությունը,

31. 3-րդ՝ մարզային փուլի մրցավարների (սննդի ընդունման օրական վճարի չափ) ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, մասնակից դպրոցների գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները, իսկ մրցանակային տեղեր գրաված դպրոցներին տրվող հավաստագրերը և գավաթները տրամադրում է Նախարարությունը:

32. 4-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, այդ թվում՝ մրցումների ծրագրով նախատեսված մարզագույքի, համապատասխան տարածքների, ձայնային տեխնիկայի ապահովում,

լուսանկարահանում, հաղորդավարի ծառայություն, հավաստագրեր, շնորհակալագրեր, գավաթներ, մեդալներ, հուշանվերներ, գրենական պիտույքներ, մասնակից թիմերի գիշերակաց և սննդի ընդունման օրական վճարի չափ, մրցավարների սննդի ընդունման օրական վճարի չափ, տրանսպորտի ապահովում, մրցանակային տեղեր գրաված թիմերին ըստ մարզաձևերի դրամական պարգևներ: 4-րդ՝ եզրափակիչ փուլի ամփոփիչ արդյունքում թիմային հաշվարկով 1-3-րդ տեղեր գրաված մարզերին՝ գավաթներ, հավաստագրեր՝ կաշվե թղթապանակներով, իսկ 4-11-րդ տեղերը գրաված մարզերին շնորհակալագրեր՝ թղթապանակներով և մարզագույք:

## VIII. ՀԱՅՏԵՐԸ

33. Սպարտակիադայի 2-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համայնքապետարանների և Երևան քաղաքի վարչական շրջանների համապատասխան բաժիններ մինչև սեպտեմբերի 20-ը:

34. Սպարտակիադայի 3-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր մինչև հոկտեմբերի 7-ը:

35. Երևանի վարչական շրջանների և համայնքային փուլի անցկացման հաշվետվությունները ներկայացվում են համապատասխանաբար Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր՝ մրցումների ավարտից հետո 5-օրյա ժամկետում:

36. Երևանի քաղաքային և մարզային փուլերի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում, հաշվետվությունները ներկայացվում են Նախարարություն՝ նշելով միջոցառման համապատասխան փուլերին մասնակցած ուսումնական հաստատությունների և աշակերտների թիվը:

37. Եզրափակիչ փուլի մասնակցության նախնական հայտերը Նախարարություն են ներկայացվում մինչև հոկտեմբերի 20-ը: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

38. Եզրափակիչ փուլին հարգելի պատճառներով մասնակցել չկարողացող դպրոցի փոխարեն պետք է մասնակցի հաջորդ տեղը գրաված դպրոցը:

39. Եզրափակիչ փուլի մասնակցության անվանական հայտերն ըստ մարզաձևերի, մրցավարական հանձնաժողովին են ներկայացվում մրցումների օրը՝ հաստատված դպրոցի տնօրենի և բժշկի (կամ ուսումնական հաստատության բուժքրոջ) կողմից: Հայտին կից ներկայացվում է՝

1) անձնագիր կամ ծննդյան վկայական (16 տարին չլրացած մասնակիցների համար),

2) տեղեկանք դպրոցից (մասնակցի լուսանկարով և դպրոցի կնիքով),

3) հայտում անհրաժեշտ է նշել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (emis.am) աշակերտի էլեկտրոնային համարը,

4) խաղային մարզաձևերում մասնակիցների մարզաշապիկները պետք է ունենան համարներ:

*Հավելված № 2*
*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*

*2025 թվականի _____________ -ի*

*№ ______________ -Ա/2 հրամանի*

# Հ Ա Յ Տ

## 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

**ՀՀ _______________մարզի/ Երևան քաղաքի**

**«_____________________________» ուսումնական հաստատության թիմի**

**_________________________ մարզաձև**

**----  ---------------2026 թ.**

| | Աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը | դասարան | ծննդյան օր, ամիս, տարեթիվ | անձնագրի կամ ծննդյան վկայականի համարը | բնակության հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| 5 | | | | | |
| 6 | | | | | |
| 7 | | | | | |
| 8 | | | | | |
| 9 | | | | | |
| | **Թիմի մարզիչ-ներկայացուցչի անունը, ազգանունը** | | | | |
| 1 | | | | | |

* Հայտին կից ներկայացվում են՝
1) աշակերտների անձնագրերի կամ ծննդյան վկայականների լուսապատճենները,
2) տեղեկանք դպրոցից՝ լուսանկարով:

**ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝** / / Կ.Տ

**ՄԱՐԶԻՉ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝** / /

**ԲԺԻՇԿ՝** / / Կ.Տ